

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԿԱՅԱՑԱԲ ԱՐՄԱԻՐԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ**

Յուճիս 24ին տեղի ունեցաւ Հայ Եկեղեցւոյ Համաշխարհային Երիտասարդական Կազմակերպութեան (ՀԵՀԵԿ) թեմական երիտասարդական խորհուրդներու ատենապետներուն հերթական ժողովը՝ նախագահութեամբ Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սիոն Եպս. Աղամեանի:

Մարտ 15ին ՀԵՀԵԿ հոգեւոր առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի նախագահութեամբ Մայր Աթոռի մէջ գումարուած Հայաստանեայց տարածաշրջանի ժողովի մէջ որոշուած էր իրականացնել միջոցառումներու շարք՝ ամէն ամիս գրասենեակի պատասխանատուներու եւ թեմերու ատենապետներու մասնակցութեամբ ժողով գումարել Հայաստանեայց տարբեր թեմերու մէջ: Առաջին ժողովը գումարուեցաւ ՀԵՀԵԿ կեդրոնական գրասենեակին մէջ եւ երկրորդը Գուգարաց Թեմի մէջ: Որոշուեցաւ յաջորդ ժողովը գումարել Սիւնեաց Թեմի մէջ: